

**«ԲԱՆՔ ԻՄԱՍՏԱՍԻՐԱՅ»-Ի
ՄԻ ՆՈՐ ԺՈՂՈՎԱԾՈՒ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՄԲ**

Ք. Ս. ՏԵՐ-ԴԱՎԹՅԱՆ

Հայ մշակույթի, գրականության, գիտության զարգացման գործում կարեւոր դեր են ունեցել հայ գաղութները: Պարսկաստանի, Ղրիմի, Պոլսի, Լեհաստանի և այլ հայ գաղթօջախների մտավորականության ներկայացուցիչները, մասնակցելով այդ երկրների հոգեոթմշակութային կյանքին, մեծ ջանքեր են գործադրել հայերին հաղորդակից գործնելու տվյալ երկրի գրականությանը, մշակույթին:

Հայ գրականության համար նշանակալից է եղել լեհահայ գաղութի գործունեությունը: Մի շարք պատմաբանների, արվեստագետների և այլ գործիչների կողքին, այն տվել է նաև փայլուն թարգմանիչներ: Հատկապես հիշատակության արժանի են Հակոբ Թոխաթեցին, որը 1614 թ. Ջամոստյեում լեհերենից հայերեն թարգմանեց հանրահոլակ «Յոթ իմաստասիրաց պասմությունը», և ապա՝ իր բաղմամբով թարգմանություններով հայտնի Ստեփանոս Լեհացին: Վերջինս փոխադրական, պատմական, աստվածաբանական երկերի շարքում 1651 թ. թարգմանեց նաև «Հայկի վարուց» բարոյախոսական գրույցների ժողովածուն¹: Այդ թարգմանությունների շնորհիվ հայերը հաղորդակից դարձան Արեւմտյան եվրոպայում արդեն վաղուց շրջանառության մեծ մտածվիպական արձակի նմուշներին:

Լեհահայ առանձին գործիչներին և, ընդհանրապես, ողջ գաղութի կյանքին նվիրվել են մի շարք ուշագրավ ուսումնասիրություններ: Սակայն ամեն մի նոր թարգմանական երկի երևան դալը ավելի է հստակում Լեհաստանի դերը թե՛ որպես միջնորդ օղակի՝ հայերին եվրոպական մշակույթին հաղորդակից դարձնելու գործում և թե՛ հենց բուն հայ-լեհական գրական առնչությունները գնահատելու հարցում:

Ահա այդպիսի մի նոր երկի արժեքավորմանն ու նրա թարգմանչի ինքնությունն է նվիրված սույն հոդվածը: Խոսքը լեհահայ գաղութի XVII դարի հասարակական և մշակութային գործիչ, լեհահայերի կաթոլիկացման կրքոտ հակառակորդ, Լվովի ավագեռեց Ջաքադիայի մասին է, որն օտար ազդյուններում հիշատակվում է Ջաքադիա Էռնեստովիչ անվամբ: Նրա հասարակական և եկեղեցական գործունեությանը անդրադարձել են մի շարք ուսումնասիրողներ: Ջեռագրերի հիշատակարաններում և այլ աղբյուրներում բավական տեղեկություններ են պահպանվել նրա կենսագրության և գործունեության վերաբերյալ: Նա ծնվել է XVI դարի վերջին քաղաքում: Հայրն էր Լվովի ավագերեց Գասպարը: 1612 թ. ձեռնադրվում է քահանա: Հ. Անասյանը ենթադրում է, որ կրթությունը կատարելագործել է Իտալիայում²: Լեհահայերի բոնի կաթոլիկացման շրջանում, 1633 թ. Լվովի հայերի կողմից նիկոլայ Թորոսովիչի փոխարեն Եպիսկոպոսության համար առաջարկվում է նրա թեկնածությունը: Նույն 1633 թ. Լվովահայերի կողմից ուղարկվում է Հռոմի պապի մոտ՝ Թորոսովիչի հալածական գործունեությունը բողոքարկելու նդել է նաև Երուսաղեմում: Լստ մի հիշատակարանի մահացել է 1652 թ. «ի թվականութեան Հայոց Մե-

¹ «Հայկի վարուց»-ի թարգմանության թվականի մասին տե՛ս ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հայ. պիտ.», 1981, № 10:

² Մանրամասն տե՛ս Հայկական մատենագիտություն. հ. Բ, Երևան, 1976, Բեռնատովիչ (Ջաքադիա), էջ 1470—1474:

³ Նույն տեղում:

ծաց ՌՃԱ և ամսեանն սեպտեմբեր ԽԴ, օրն շորեքշաբաթի գիշեր, վաղճանկցաւ տէր Զաքարիա Լովու աւագէրէց ծեր քահանայ, և փոխեցաւ առ Քրիստոս»⁴։

Զաքարիայի գրական հետաքրքրությունների և գործունեության մասին քիչ թե շատ պատկերացում են տալիս նրա պատվիրած, մշակած, ընդօրինակած ձեռագրերը։ Այսպես, 1614 թ. Լվովում նրա պատվերով Գրիգոր Տոմա-ժիրսկին ընդօրինակում է մի ձեռագիր, որը պարունակում էր Բարսեղ Կեսարացու Վեցօրյան և տոմարագիտական բազմադան նյութեր (Դավիթ Զևթունցու, Հակոբ Դրիմեցու, Անանիա Շիրակացու, Հովհաննես Երզնկացու, Առաքել Սյունեցու, Սարգիս փիլիսոփայի և այլն)։ 1635 թ. Լվովում նրա պատվերով Ղազարի որդի Մկրտիչը ընդօրինակում է մի ձեռագիր, որը բովանդակում էր Կանոնագիրքը և այլ նյութեր։ Զաքարիան Կանոնագրքի այս օրինակը բարեփոխումների է ենթարկել և կազմել է նյութերի այբբենական ցանկը։

Զաքարիայի գրական աշխատանքների մեջ առավել հետաքրքրականը և արժեքավորը «Բանք իմաստասիրաց»-ի մի անծանոթ ժողովածուի թարգմանությունն է։ Այն զետեղված է իր իսկ կողմից ընդօրինակված ձեռագրի մեջ, որը պահվում է Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանում (№ 1916)։ Զեռագրում ամփոփված են մի շարք երկեր՝ «Պորփիրի ներածություն Ստորոգությանը», «Մեկնութիւն Ստորոգութեանցն Արիստոտելի» և այլ փիլիսոփայական գրվածքներ։ Զեռագրի 378բ—389ա էջերում ներկայացված է «Բանք իմաստասիրաց, պիտանի ամենայն մարդոյ» իմաստասիրական ասույթների ժողովածուն, որին, որպես անմիջական շարունակություն, հաջորդում է մի նոր երկ, բաղկացած շոքս «Հատորից»։

1. «[Առաջին հատոր] Բանք իմաստասիրաց, ասացեալ կարճառաւտ ի յազուտ ուսումնասիրաց» (սկ. «Սոկրատես էր ծնեալ յԱթէնս...»), էջ 389ա—405ա։

2. «Ի յերկրորդ հատորի Բանք եղեալ են կայսերաց, թագաւորաց, իշխանաց, զարաւարաց և այլ իշխեցողաց» (սկ. «Ուրիտ կայսր Հռովմայ։ Երբեմն անյայտ կամեր ի վերայ ծովու նաւել...»), էջ 405ա—414բ։

3. «Երրորդ հատոր։ Կարճառաւտ բանից՝ Լեակեղծմնացոց» (սկ. «Լեակեղծմնացիք։ Որքան Յունաց թագաւորութիւն կայր...»), էջ 414բ—419բ։

4. «Տորրորդ հատոր։ Կարճառաւտ գրեալ բանք, որ եղեալ են ի սմա։ Կնոջ ազգի իմաստուն ասացեալ բանքն» (սկ. «Ալումպիա, մայր Աղեքսանդրու թաղաւորի Մակեդոնացոյն...»), էջ 419բ—421բ։

421բ էջում թարգմանիչը թողել է իր հիշատակարանը, որից պարզվում է, որ նա այդ երկը թարգմանել է հայերեն 1633 թ.։ Ահա այդ հիշատակարանը. «Թարգմանեցաւ այս՝ իմաստասիրաց ասացեալ կարճառաւտ բանքս ի հաչ բարբառ, ի ձեռն Զաքարիա Լովա աւագիրիցուն, թվին ՌՁԲ (1633), լուրիս ամսոյ ԻԲ, ի հալածական ժամանակս մեր, որ վասն ուղղափառ հաւատոյ։ Եւ դարինակողքս խնդրեմ, զի գայս սակաւ զհիշատակարանս գրէք, և զմեզ՝ մեղաւք տառապեալս ի իյ սրբափայլ յաղաթս ձեր մի մոռանալք, նոյնպէս և դուք առաջի Քրիստոսի յիշեալ լիջիք»։

Այս թարգմանությանը անդրադարձել է միայն Հ. Անասյանը։ Թվարկելով № 1916 ձեռագրում ամփոփված նյութերը, նա հետևյալ տեղեկությունն է տալիս այդ թարգմանության մասին. Զաքարիան «զետեղել է նաև քառահատոր մի աշխատությունից թարգմանաբար հանված հինգ անջատ գրվածքներ, որոնց մեջ ամփոփված են նշանավոր մարդկանց արժեքավոր խոսքեր, պատմական ալլեգյալ տեղեկություններ»⁵։ Այստեղ Հ. Անասյանը մի փոքր սխալվում է՝ Զաքարիային վերագրելով նաև «Բանք իմաստասիրաց, պիտանի ամենայն մարդոյ» երկի (էջ 378բ—389ա) թարգմանությունը և թվարկելով քառահատոր աշխատությունից թարգմանված նյութերը, իր կողմից անկյունավոր փակա-

⁴ Ղ. Ալիշան. Կամենից. Վենետիկ, 1896, էջ 112։

⁵ Հայկական մատենագիտություն. հ. Բ, էջ 1472։

գծերի մեջ նրա սկզբում ավելացնում է «Առաջին հատոր»։ Այդ պատճառով 4 դրվածքների փոխադրեն ստացվում է 5։ Իրականում «Առաջին հատոր» բառերը պետք է ավելացնել «Բանք իմաստասիրաց ասացեալ կարճառատ ի յաւ-դոտ ուսումնասիրաց»-ի սկզբում (էջ 389ա), ինչպես արել ենք մենք։ Մրա-նից հետո կգա արդեն հենց բնագրում նշված երկրորդ հատորը՝ «Ի յերկրորդ հատորի»։ ...և հաջորդաբար՝ «Երրորդ հատոր», «Չորրորդ հատոր»։

Իսկ «Բանք իմաստասիրաց, պիտանի ամենայն մարդոյ» առանձին ժո-ղովածու է և վաղ շրջանի թարգմանություն։ Լինելով ավելի համառոտ, այն հիմնականում համապատասխանում է «Սոփերք»-ի հրատարակությանը⁶։ Ձեռագրում այդ երկը ունի 21 գլուխ, իսկ «Սոփերքում»՝ 24։ Նկատվում է գր-լուխների հաջորդականության ողող խախտում։ Գլուխների ներսում էլ բնա-դիրը ավելի համառոտ է։ Այդ տարբերություններն, ըստ երևույթին, գալիս են Ջաբարիայի ձեռքի տակ եղած ընդօրինակությունից։ Համադրությունը, սա-կայն, ցույց է տալիս, որ «Սոփերքի» և № 1916 ձեռագրի «Բանք իմաստասիրաց, պիտանի ամենայն մարդոյ» բնագրերը միևնույն թարգմանության արդյունք են։

Այդ ժողովածուի ինքնուրույն երկ լինելը վկայվում է նաև հաջորդ չորս դրվածքների բոլորովին տարբեր կառուցվածքով։ Առաջինում նյութերի բաշխ-ման սկզբունքը թեմատիկ է։ Ամբողջ ժողովածուն գլուխների է բաժանված ըստ թեմաների. «Ճաղագս իշխանաց», «Յաղագս խրատու», «Յաղագս բախտի» և այլն։ Մինչդեռ Ջաբարիայի կողմից թարգմանված երկը բաղկացած է չորս

6 Տե՛ս «Սոփերք հայկական»։ Տ. Ա., Վենետիկ, 1853, էջ 9—59։ Նույն այդ երկը ուշ շըր-ջանի՝ XVII դարի թարգմանությամբ կամ խմբագրությամբ 1675 թ. հրատարակել է Ոսկան Երե-վանցիի մի փոքրիկ ժողովածուի կազմում՝ «Ասացումք իոհեմական հնոց իմաստասիրաց» վեր-նագրով (տե՛ս «Գիրք վալելուշ և հարկաւոր... Տպագրեցեալ... ի Մարշիւնայ թուին Քրիստոսի 1675, էջ 74—125)։ Սակայն, ինչպիս նկատել է Ջարբհանալյանը, «Բանքի» «գրագրաց մեջ գտնվածներն ավելի բազմաթիւք են և ճոխ իրենց պարունակությամբ, թեպետ ոչ միշտ նույն բնութայնությամբ լեզվի և հավատարմությամբ» (Հայկական մատենագիտություն. Վենետիկ, 1893, էջ 133)։ Ձեռագրերում պահպանվել են հիշյալ երկի բազմաթիւ ընդօրինակություններ։ Մաշ-տոցի անվան Մոսկովյան պալատական ձեռագրացուցակում «Բանք իմաստնոց» խորագրի տակ նշված է 96 գրագիր։ Այստեղ կան բավական վաղ ժամանակաշրջանի ընդօրինակություններ։ Ամենա-վաղ գրագիրն է № 2273 ձեռագիրը, որը գրված է իտրանաշատում 1253 թ., նույն XIII դարի (1298 թ.) ձեռագիր է № 1409-ը՝ գրված Տաթևում։ Ապու կան XIV, XV—XVI և ավելի ուշ դա-րերի ձեռագրեր։ Վերջ նշված երկու հրատարակություններից Ոսկան Երևանցունը գրեթե մո-ուսացված է։ Շատ ավելի հայտնի է Մխիթարյանների հրատարակածը։ Վերջիններս գտնում են, որ իրենց հրատարակածը հույն հեղինակ Ստրեբոսի (որն, ըստ նրանց, ապրել է Քրիստոսից 150 տարի հետո) երկի V դարի սկզբում կատարված թարգմանությունն է։ Ստրեբոսի II դար տանելը թյուրիմացության արդյունք է։ Հովհաննես Ստրեբոսը VI դարի առաջին տասնամյակների բյուզանդական հեղինակ է, որն իր մեծածավալ երկի մեջ ամփոփել է անտիկ և հռոմեական շրջանների ասուլիսների ժողովածուների թողած ժառանգությունը։ Սակայն «Բանք իմաստասի-րաց» ժողովածուի թարգմանության վաղեմության վկայություն Մխիթարյանների համար ծա-ուայում է նաև թարգմանություն լեզուն՝ «վարպետ և ընտիր շարադրանքը»։ Նրանք գտնում են, որ «մեր երանաշնորհ թարգմանիչ նախնայց ձեռքն ուլ անցեր է» այն («Բաղմավեպ», Վենե-տիկ, 1853, էջ 252)։ «Սոփերք»-ի հրատարակության կապակցությամբ իր ուսումնասիրությամբ հանդես եկավ իտալացի հայագետ է. Տեղան (այդ ուսումնասիրության համառոտ թարգմանու-թյունը իտալերենից հայերեն տե՛ս է. Տեղ. Հ. Զեյլեն իմաստասիրաց հատընտիր խրատք թադ-մանյալս ի հայ. — «Բաղմավեպ», 1894, էջ 71—76, 130—133)։ Նա կասկածի տակ դրեց Մխի-թարյանների կարծիքը «Բանքի» թարգմանության ժամանակի և հունական բնագրի հեղինակի վերաբերյալ։ Այդուհանդերձ նա համեմատում է «Բանքը» Ստրեբոսի երկի հետ։ Մեզ համար «Բանքի» վաղ շրջանի թարգմանություն լինելու վկայություն են նաև վերջ հիշատակված վաղ շրջանի ընդօրինակությունները։ Եթե, այնուամենայնիվ, ընդունենք, որ «Բանքը» իրոր Ստր-եբոսի գրքի թարգմանական համառոտ քաղաղությունն է, ապա այն շէր կարող VI—VII դդ. ավելի շուտ թարգմանված լինել։

հատորներից, իսկ ներսում նյութերի բաշխման սկզբունքը ըստ հեղինակների է⁷:

Վերը ասվածից զալիս ենք այն եզրակացության, որ Զաքարիան ընդօրինակել է արդեն վաղուց հայերեն թարգմանված «Բանք իմաստասիրաց, պիտանի ամենայն մարդոյ» երկը և կցել նրան իր թարգմանած մի այլ նմանատիպ գործ՝ ցանկանալով հարստացնել հայ միջնադարյան դրականությանը վաղուց հայտնի «Բանք իմաստասիրաց» ժողովածուն: Իր թարգմանության մեջ նա պահպանել է նաև «Բանք» բառը:

Մի կողմ թողնելով հնում թարգմանված ժողովածուն, որի քննությունը մեր խնդիրը չէ, անցնենք մեզ հետաքրքրող երկին:

Ինչպես տեսանք, բացի թարգմանության թվականից, վայրից և թարգմանչի անունից, հիշատակարանը այլ տեղեկություններ չի պարունակում. ոչ մի խոսք չի ասված ո՛չ թարգմանության աղբյուր հանդիսացող երկի, ո՛չ նրա հեղինակի և ո՛չ լեզվի մասին: Գիտենք միայն, որ թարգմանությունը արված է Լեհաստանում՝ Լվովի ավագերեց Զաքարիայի կողմից: Զ. Անասյանը ենթադրում է, որ այն, հավանաբար, կատարվել է լատիներենից⁸:

Այս հարցերի պատասխանը գտնելու գործում մեզ համար ուղեցույց են ծառայել ինքը երկը և ժամանակի լեհ գրականությունը: Վերջինիս մեջ ասույթների ժողովածուները սկիզբ են առնում XVI դարի վերջից: Նրանք կազմվում են Արևմտյան եվրոպայում մեծ տարածում գտած բաղմաթիվ ժողովածուների նմանությամբ: Հայտնի է լեհ հեղինակ Նիկոլայ Ռեչի (1507—1569 թթ.) ժողովածուն: Ռեչը առաջինն էր լեհ հեղինակների մեջ, որ գրում էր բացառապես լեհերեն: Այդ ժողովածուն հրապարակվեց 1562 թ.: XVII դարի սկզբներին հրատարակվեցին ևս երկու նմանատիպ ժողովածուներ՝ Վիտկովսկու և Բենյաշ Բուդնու: Այս վերջինիս ժողովածուն, որը կրում էր «Զորս գիրք հակիրճ և պերճախոս պատմությունների, որոնք հունարեն կոչվում են Ապոթեգմատա» վերնագիրը, լայն ճանաչում գտավ: XVII դարի երկրորդ կեսին այն թարգմանվեց նաև ռուսերեն, ապա XVIII դարի ընթացքում ունեցավ մի քանի հրատարակություններ (1711, 1716, 1723, 1745—1765, 1781 թթ.):

Բենյաշ Բուդնու ժողովածուն բաղկացած էր չորս գրքերից (մասերից). առաջինում տրված էին իմաստասերների, երկրորդում՝ կայսրերի, թագավորների և այլ իմաստուն իշխանավորների, երրորդում՝ լակեղեմանացիների, չորրորդում՝ իմաստուն կանանց ասույթները:

Պարզվում է, որ Զաքարիայի թարգմանությունը նույնպես առնչվում է Բենյաշ Բուդնու ժողովածուի հետ: Ձեռքի տակ չունենալով վերջինիս բնագիրը, մենք Զաքարիայի թարգմանության երեք մասերը համեմատեցինք ռուսերենի հետ: «Ապոթեգմատայի» ռուսերեն թարգմանության ձևագրերում Բենյաշի բրնագրի 4 գրքերն էլ կան, սակայն տպագրվել են միայն առաջին երեքը⁹: Վերջին գիրքը՝ իմաստուն կանանց ասացվածքները, բացակայում է¹⁰:

7 Դեռևս Մ. Ն. Ապեռասկին՝ ասույթների ժողովածուների հմուտ հետազոտողը, հնում գույություն ունեցող ժողովածուները սահմանադատում է ըստ նրանց կառուցվածքի, մատնանշելով երեք տիպի կառուցվածք ունեցող ժողովածուներ, որ ամբողջ նյութը բաշխված է կամ ըստ թեմաների, կամ ըստ հեղինակների, կամ այբբենական կարգով: См. М. Н. Сперанский. Переводные сборники изречений в славяно-русской письменности. М., 1904, с. II.

8 Հայկական մատենագիտություն. հ. 6, էջ 1473:

9 Ф. А. Брокгауз и И. А. Эфрон. Энциклопедический словарь. Т. 2. С.-Петербург, 1890, «Апофегмата».

10 Մենք օգտվել ենք չորրորդ հրատարակությունից: Այն նրա տիտղոսաթերթը. «Апофегмата, то есть кратких витиеватых и нравоучительных речей книги три. В них же положены различные вопросы и ответы, жития и поступки, пословицы и разговоры различных древних философов. Переведены с польского на славенский язык». Против первого издания третьим тиснением напечатаны в Санктпетербурге 1745 года.

Առաջին իսկ հայացքից պարզվում է, որ Բենյաշ Բուդնու ժողովածուն ծավալով շատ ավելի մեծ է, քան հայերեն թարգմանությունը։ Ռուսերեն հրատարակությունը, ուր բացակայում է վերջին՝ 4-րդ գիրքը, գրեթե երկու անգամ ավելի ծավալուն է, քան ժողովածուի հայերեն թարգմանությունը։ Վերջինս ունի Բենյաշ Բուդնու ժողովածուի շոքս գրքերը կամ, ինչպես մատնանշված է յուրաքանչյուր մասի խորագրում, «հատորները»։ Դրանք իրենց բովանդակությամբ, ինչպես նաև վերնագրերի որոշ նմանությամբ, համընկնում են ռուսերեն թարգմանության համապատասխան գլուխներին։

1. «Բենյաշին հատոր» Բանք իմաստասիրաց, ասացեալ կարջառաւ ի յաւգուտ ուսումնասիրաց» (էջ 388—401)։ Ռուսերենը. «Кратких речей и ответов. Книга первая» (с. 1—100).

2. «Ի յերկրորդ հատորի Բանք եղեալ են կայսերաց, թագաւորաց, իշխանաց, դաւրականաց և այլ իշխեցողաց» (էջ 405ա—414բ)։ Ռուսերենը. «Кратких и узнатых повестей. Книга вторая. В ней же положены повести кесарей римских, королей, князей, вождей воинских, сенаторей и иных чиновачальников» (с. 101—138).

3. «Երրորդ հատոր։ Կարճառաւ բանից՝ Լեակեղովնացոց» (էջ 414—419)։ Ռուսերենը. «Книга третья, в ней же заключаются повести лакедемонския» (с. 139—153).

4. Չորրորդ հատոր։ Կարճառաւ դրեալ բանք, որ եղեալ են ի սմա։ Կնոջ աղգի իմաստուն ասացեալ բանքն (էջ 419ա—421ա)։ Ռուսերեն հրատարակությունը չունի։

Խոշ էր իրենից ներկայացնում Բենյաշ Բուդնու ժողովածուն։ Այդ հարցին պատասխանելու համար անհրաժեշտ է մի փոքր տեղեկություն տալ ասույթների ժողովածուների մասին ընդհանրապես։

Ասույթը կոնկրետ և համառոտ արտահայտված այն միտքն է, որից բխում է որևէ բարոյախոսական սկզբունք։ Փիլիսոփայական և բարոյագիտական հնագույն սխոտեմները ի հայտ են գալիս ասույթների ձևով։ Դրանց ծագումը անտիկ գրականության մեջ հասցվում է մ. թ. ա. VI—V դդ.։ Ուսումնասիրողները տարբերում են երկու տիպի ասույթների ժողովածուներ՝ «Գնոմոլոգիաներ» (հուն. γνῶμολογία «խրատ ասույթ» բառից) և «Ապոթեգմատներ» (հուն. αποθεγματολογία «ասույթ, դիպուկ խոսք»)։ Սկզբնական շրջանի, հնագույն շերտի համար, բնորոշ էին բանաստեղծական ասույթների ժողովածուները՝ «Գնոմոլոգիաները», ուր քաղվածքներ էին ամփոփված այս կամ այն նշանավոր բանաստեղծի, փիլիսոփայի երկերից։ Սրանք մի կողմից հետապնդում էին ուսուցողական նպատակ՝ նախատեսված էին դպրոցների համար, մյուս կողմից՝ նպաստում էին փիլիսոփայական որևէ ուղղության գաղափարների տարածմանը։ Գնալով այդ ժողովածուների թիվը աճում է։ Առաջ են գալիս ժողովածուներ, որոնցում ամփոփվում էին ոչ թե մեկ, այլ արդեն մի խումբ հեղինակների ասույթներ։ Հետագայում, հոմեական դարաշրջանում, նոր պայմաններում, հարմարեցվելով հոմեական բարձրագույն տիպի հոետորական դպրոցներին, դրանք հագեցվում են արձակագիրների երկերից, հատկապես պատմիչներից քաղված ասույթներով, ուր շոքսով են օգտագործվում են տարբեր պատմական անձանց կենսագրություններից վերցված բարոյախոսական դեպքեր, անեկդոտանման պատմություններ, առակներ։ Հին բանաստեղծական ասույթներին կցվում են բացատրություններ։ Այս նոր տիպի ժողովածուները կոչվում են ապոթեգմատաներ։ Հայտնի են ապոթեգմատաների Պլուտարքոսի, Ֆավորինի խմբագրությունները, Ստոբեոսի ժողովածուն։

Եվ հունական, և՛ հոմեական ասույթները, նախատեսված լինելով դպրոցի համար, պահպանում են իրենց նշանակությունը նաև դպրոցից դուրս, որոշ իմաստով դառնալով տեղեկատու հանրագիտարաններ, որոնցից կարող էին օգտվել թե՛ աշակերտները, թե՛ գիտնական գրողները։ Բացի այդ, ասույթների բոլոր ժողովածուները հոմեական դարաշրջանում գրողներին համար

ձևեր են բերում «loci communes»-ի («ընդհանուր տեղիներ»-ի) նշանակություն: Վերջինս որոշիչ դեր խաղաց զրանց դասավորման, տարբեր ձևերի առաջացման մեջ (թեմատիկ, հեղինակային և չափերական կարգով): Դասակարգման այդ սկզբունքները հավաքողին ազատ ընտրության հնարավորություն էին տալիս. նա կարող էր դուրս նետել կամ ներմուծել այս կամ այն ասույթ: Նույն կերպ կարող էր վարվել գրիչը, ընդօրինակողը: Սրանով է բացատրվում ասույթների ժողովածուի բազմազանությունը տարբեր ընդօրինակություններում¹¹:

Ասույթները, իրենց մեջ պարունակելով ընդհանուր երևույթներից սինթեզված և կոնկրետ առտահայտված բարոյախոսական, փիլիսոփայական և այլ դրույթներ, դյուրմբռնելի էին, պատկերավոր և հեշտությամբ հիշվում էին, մի բան, որ նպաստեց նրանց գոյատևմունքը մինչև ուշ միջնադար: Նրանք թափանցում էին պատմագրական, փիլիսոփայական երկերի, քարոզների ժողովածուների¹², ժողովողական բանավոր խոսքարվեստի մեջ, առատ աղբյուր էին դառնում հատկապես ասացվածքների համար¹³:

Ահա այդ երկրորդ տիպի ժողովածուների թվին է պատկանում Բենյաշ Բուդնու երկը: Նրանում ամփոփված նյութերի մասին ամենալավ պատկերացումը տալիս է ռուսերեն թարգմանության վերնագիրը. «Апофегматы, то есть кратких витиеватых и правоучительных речей книги три, в них же поможены различные вопросы и ответы, жития и поступки: пословицы и разговоры различных древних философов». Եվ իրոք, այստեղ, ինչպես ուշ շրջանի նման ժողովածուներում, որոնք ընդգրկում էին նաև գնոմոլոգիաներում հղած նյութը, կան հարցերի և պատասխանների ձևով տրված ասույթներ և ասացվածքներ, կարճ բարոյախոսական անեկդոտանման դեպքեր պատմական անձների կենսագրությունից: Որոշ իմաստասերների ասույթներին երբևէ նախորդում կամ հաջորդում են համապատասխան հեղինակների 1—2 էջանոց «ուսմունքները»¹⁴ կամ «առակները»¹⁵, որոնք նույնպես կրում են աֆորիզմային բնույթ: Օրինակ, «Սոկրատի ուսմունքը» հատվածում կարդում ենք. «Не благородного человека дело, еже в очи кого хвалить, а за очи хулить» (с. 1), կամ՝ «Доброта без разума пуста» (с. 1) և այլն: Երբեմն ասույթները միջարկվում են բանաստեղծական հատվածներով (8—10 տողանոց):

Բացի այդ, Բենյաշի ժողովածուում բոլոր ասույթներին և նրանց կցված առակներին կամ զոդյուններին հաջորդում են ավելի ծավալուն բարոյախոսական մասեր, որոնք նախատեսված էին բացահայտելու պատմությունների դաստիարակչական նշանակությունը:

¹¹ Ասույթների ծագման և հին ժողովածուների մասին տե՛ս Մ. Н. Сперанский, Указ. соч., с. 1—67.

¹² Քրիստոնեական դարաշրջանի գրականությունը ժառանգեց նաև անտիկ և հռոմեական շրջանների ժողովածուները, միաժամանակ նրանց նմանությամբ ստեղծելով քրիստոնեական ասույթների ժողովածուներ, որոնց աղբյուր էր հանդիսանում հիմնականում Աստվածաշունչը: Այդպիսին էր միջնադարում հայտնի Հովհան Դամասկոսու «Սուրբ զուգահեռներ» ժողովածուն և այլն:

¹³ Ռուս գրականության մեջ ասույթների փոխանցումը ասացվածքների և նրանց փոխադարձ կապի հարցերը գրավել են Ադրիանովա-Պերետցի ուշադրությունը: Այդ հարցերի քննությանը նա նվիրել է երկու հոդված. Афоризмы Изборника Святослава 1076 г. и русские пословицы.—Памятники русской литературы X—XVII вв. (ТОДРЛ). М.—Л., 1970, с. 1—19; Библиейские афоризмы и русские пословицы.—Древнерусская литература и русская культура XVIII—XX вв. (ТОДРЛ). Л., 1972, с. 8—13.

¹⁴ Տե՛ս թեկուզ, «Сократово учение» (с. 1—2); «Учение его [Платона—К. Т.-Д.] сие суть» (с. 6—7); «Учение его» (Ксенократа—К. Т.-Д.).

¹⁵ Օրինակ՝ «Притчи благоразумные Аристотелевы» (с. 21—22).

«Апофегмата»-ի և Զաքարիայի թարգմանության համեմատությունից բացահայտվում է վերջինիս սեղմության պատճառը և նրանց միջև եղած տարբերությունը.

1. Զաքարիան իր թարգմանության մեջ չի տալիս այս կամ այն փիլիսոփայի «ուսմունք» կոչված հատվածները:

2. Որպես կանոն, չի թարգմանել ասույթներին հաջորդող բարոյախոսությունները: Բերենք մի երկու օրինակ՝ համադրելով ուսերեն և հայերեն թարգմանությունները.

«Апофегмата»

Ձեռագիր № 1916

«Хвалящим неким много даровавшего Диогену в снабдение, рече Диоген: почто и меня не хвалите, яко стался достоин прияти то от него.

Многие люди только тех хвалят, что дают, а кои берут, тех они ничтожат. Но множае вящим пристойно брати кому неже дати, дати бо может всяк человек мочный, а взять по достоинству никтоже, точно человек достойныи, и оттуду пословка есть, дар принял той, иже достойному дал» (с. 32).

«Вопрошен, что ему корысти из философии; отвеща: Та есть корысть, что всякому безопасно правду могу говорить.

Философ истинный не боится смерти, и могущественному правду говорить может, не опасается милости лишиться, говоря правду: есть бо человек свободен, нечеловекоугоден» (с. 8).

«Поведа: яко учения корень горек, но гроздь и плод сладок.

Всякое учение принимать досадно, а научась на свою красоту употреблять и к общему благу, вещь есть зило благоприятна» (с. 19).

«Егда град, в нем же Внас родися, от неприятеля пленен бе, жителем же его повелено, кто что может понести. И многие вещи носящие исхождаху, един точно Внас ничтоже взял с собою, к вопрошающим же отвеща: за всё имение мое несу с собою.

Являя, яко то правое имение, его же отнять никто может, доколе живе человек» (с. 52).

«Երբ ոմանք զոմն գովէին, որ շնորհեալ էր ոչ սակաւ Դիոգինեա վասն ազտի կենաց, ասաց Դիոգինէս. «Վասն է՞ր և զիս ոչ գովէք. որ արժան էի առնուլ զայս ի նմանէ»

(էջ 395բ):

«Երբեմն հարցանէին, եթէ զինչ շահ ունիս յիմաստութենէ: Ասաց՝ զայս շահ ունիմ, որ ամենեցուն համարձակ զճշմարտութիւն կարեմ ասել» (էջ 391բ):

«Ասէր զարմատ խրատուն դառն և զպտուղ նորա քաղցր» (էջ 394ա):

«Եւ իբրև զքաղաքն զայն, որ ինքն Բաբիաս ի նմա ծնեալ էր, թշնամին էառ, և քաղաքացիք ունէին հրաման բառնալ լընչից, ռշափ և կարիցէ որ, և այնպէս ելանել ի քաղաքէ: Բայց ինքն Բաբիաս ոչ ինչ առեալ՝ ել և գնաց: Եւ իբրև հարցին ցնա՝ վասն է՞ր ընդ իւր յրնչից իւրոյ ոչ ինչ բարձէր, պատասխանի ետ՝ ես զամենայն ինչս իմ ընդ իս տանիմ» (399բ):

Միայն երկու տեղ լուսանցքում Զաքարիան պահպանում է ասույթի բարոյախոսությունը: Օրինակ, էջ 394բ կա այսպիսի մի զրույց. Արիստոտելը 62 տարեկան հասակում հիվանդանում է: Աշակերտները տեսնելով, որ ուսուցչի ապաքինման հույս չկա, հարցնում են նրան, թե ում կցանկանար տեսնել իրեն հաջորդ. «Եւ կայր ի մէջ աշակերտաց նորա Բ գլխաւորագոյնք՝ Թէոփրաստոս

լեզվապետ և Մենդեմոս Ռոտոնա կղզայ», — ասվում է ղրույցում: Արիստոտելը խնդրում է, որ իրեն բերեն գինի այդ վայրերից: Եվ երբ բերում են. «Ճաշակեաց դայն, որ էր Ռոտոնա, և ասաց. «Տիրաւի է յուժով և անուշ»: Եւ ասաց զայն ճաշակեաց՝ որ լեզվապետ էր: Եւ ասաց երկոքեան անուշ են, բայց լեզվապետն անուշագոյն է»: Այս պատմության դիմաց լուսանցքում գրված է. «Յայս խօսից իմանալի է, որ յաջորդ յայտնեաց յետ իւր զԹէոփրաստես: Եւ յայս ևցայց զմեծ հանճարեղութիւն իւր: Զի գովելով սուրբսն՝ եթող լսողաց զազասւրնտութիւն» (էջ 394բ)¹⁶:

Կամ, նույն էջում կա Դիոգենեսի մասին հետևյալ գրույցը. «Դիոգինէս երբեմն փառեաց ջահ և երթայր առաւատուն ի փողոցս, իբր թէ ինչ խնդրէր: Եւ երբ հարցին զնա, թէ՛ զինչ խնդրես, ասաց. «Զմարդ խնդրեմ»: Այս ղրույցի դիմաց լուսանցքում սրված է հետևյալ բացատրութիւնը. «Այս իրաւի ծանոց, թէ զժուարագոյն է վասն մարդոյ ի մէջ բազմամբոյս ժողովրդեան» (էջ 394բ)¹⁷:

Սի այ տեղ, նույնպէս լուսանցքում, Լուկրեցիայի պատմության կասկածն իջնալով գրված է. «Յաւո. «Եւ հոռմայեցիք վասն այս շար գործոյ զթագատուն զԴարբուէնիոսն և զորդիսն նորա ի թագաւորութենէ արքորեցին» (էջ 420ա):

3. Զաքարիայի մոտ երբեմն բացակայում են մի շարք փիլիսոփաների, կայսրերի, լակեդեմոնացիների ասույթները: Օրինակ՝ առաջին «հատորի» վերջում ռուսերենի համեմատ պակասում են 15 իմաստասերների անունները և նրանց ասույթները: Երկրորդ զրքի տարբեր տեղերում դուրս են մնացել մի քանի անուններ, նույնը նաև՝ երրորդ գրքում:

Ստորև ներկայացնում ենք հայերեն թարգմանության բովանդակութիւնը հատվածների սկզբնաբառերով՝ պահպանելով հաջորդականութիւնը.

1-ին հատոր

Բանբ իմաստասիրաց, ասացեսլ կարճառատ ի յսուգուտ ուսումնասիրաց

- | | |
|--|------------------------|
| 1. «Նոկրատէս էր ծնեալ» ¹⁸ (389ա—390բ) | 18. Տիմոնարս (402ա) |
| 2. Պղատոն (392բ—393ա) | 19. Պիթագորաս (402բ) |
| 3. Արիստո (392բ—393ա) | 20. Արգեսիլաոս (402բ) |
| 4. Անդիսթէնէս (393ա—393բ) | 21. Կլէանդէս (402բ) |
| 5. Արիստոտէլ (393բ—394բ) | 22. Ղերակէս (403ա) |
| 6. Քսէնոքրադէս (394բ) | 23. Քսենոքոն (403ա) |
| 7. Դիոգինէս (394բ—397բ) | 24. Էպիքղէմոս (403ա) |
| 8. Դադէս (397բ—398ա) | 25. Անաքսիմէնէս (403ա) |
| 9. Սոդոն (398ա—399ա) | 26. Խիլո (403բ) |
| 10. Բարիաս (399ա—399բ) | 27. Քրիսիբոս (404ա) |
| 11. Պիտակ (399բ) | 28. Կլէոպոլոս (404ա) |
| 12. Պիոն (399բ—400ա) | 30. Պէրէանդոս (404ա—բ) |
| 12. Անաքսագորոս (400ա—400բ) | 31. Սիմոնիտէս (404բ) |
| 13. Թէոփրաստոս (400բ) | 32. Գէօրգիոս (404բ) |
| 14. Քրադէս (400բ—401ա) | 33. Անախարսէս (405ա) |
| 15. Զենոն (401ա—401բ) | 34. Էպիկուրաս (405ա) |
| 16. Մէնտէմոս (401բ) | 35. Ապոդինարոս (405ա) |
| 17. Ադիլպոնոս (402ա) | 36. Դէմէտրիոս (405ա) |

¹⁶ Հմմտ. ուս. էջ 20:

¹⁷ Ռոտ. տեղ. էջ 24:

¹⁸ Այս մասը ռուսերենում բացակայում է: Սրա փոխարեն կա «Сократого учение» (с. 1—2), որը չկա հայերենում:

Հայերենի առաջին «հատորում» ուսերենի համեմատությամբ պակասում են 15 իմաստասերների ասույթները, չհաշված «ուսմունքները»:

2-րդ հատոր

Բանք եղեալ են կայսերաց, քաղաւորաց, իշխանաց, զաւրաւրաց
և այլ իշխեցողաց

- | | |
|------------------------------|------------------------------------|
| 1. Ուլիոս կայսր (405ա) | 19. Թէոնէսիոս (410բ) |
| 2. Աւգոստոս (405բ) | 20. Թէոնէսիոս Փոքր (411ա) |
| 3. Տիրերոս (406ա—406բ) | 21. Ակաթոքս (411ա) |
| 5. Տիտոս (406բ) | 22. Արպեղայոս (411բ) |
| 6. Վէսթէգիլեան (407ա) | 23. Պոլլոս (411բ) |
| 7. Տրախանոս (407ա) | 24. Դէմիսթոկլէս (411բ) |
| 8. Անդրիանոս (407ա) | 25. Էբամիլեոնտոս (412ա) |
| 9. Անտոնինոս (407բ) | 26. Աննիպաղիոս (412բ) |
| 10. Յիլիպպոս (407բ) | 27. Թէրէսոս (412բ) |
| 11. Աղեքսանդր թագ. Մ. (408ա) | 28. Սկիրիոս Մեծ (412բ) |
| 12. Անդիկոնոս (409բ) | 29. Սկիրիոս Փոքր (412բ) |
| 13. Անդիկոնոս Բ (409բ) | 30. Պոմպէոս Մեծ (413ա) |
| 14. Կիրոս (410ա) | 31. Բարմէնիոս (413բ) = ուս. 45 |
| 15. Կիրոս Բ (410ա) | 32. Կաթոս (413բ) = ուս. 40. |
| 16. Քսերքսէս (410ա—բ) | 33. Պոդոս Էմիլիոս (413բ) — ուս. 43 |
| 17. Արտաշիր (410բ) | 34. Մարկոս Կիկերոս (414ա) |
| 18. Ամասէս (410բ) | 35. Մարկոս Լիվիոս (414ա) = ուս. 44 |
| | 36. Մանլիոս Դորքվադոս (414ա) |

Հայերենի 2-րդ հատորում բացակայում են 15 իմաստուն իշխանավորների անուններն ու նրանց ասույթները: Իր հերթին, ուսերենը չունի հայերենի երեք իշխանավորների անունները և համապատասխան «ասույթները», այն է՝ Սկիրիոս Փոքր (էջ 412բ), Մարկոս Կիկերոս (էջ 412ա), Մանլիոս Դորքվադոս (էջ 414ա): Պոմպէոս Մեծից հետո (էջ 413ա) նկատվում է մի փոքր խախտում, ավելի ճիշտ, եթե հաշվի չառնենք հայերենում պակասող անունները, ապա այդ խախտումը կվերաբերի միայն «Բարմէնիոսին», որը հայերենում գալիս է Պոմպէոսից հետո, իսկ ուսերենում ընկել է վերջը:

3-րդ հատոր

Կարևաոս քանից՝ լակեդոմնացոց

- | | |
|-----------------------------------|---|
| 1. Լիքոուրկոս (414բ) | 12. Լէոն (417բ) |
| 2. Ակասիկոս (415բ) | 13. Լիսանտրոս (417բ) |
| 3. [Կիկերոն] (415բ) ¹⁹ | 14. Նամէթոս (417բ) |
| 4. Ակիս (416ա) | 15. Պոստանդէս (417բ) |
| 5. Ալքամէնէս (416ա) | 16. Պէտարէտոս (418ա) |
| 6. Անաքսանդրիոս (416ա) | 17. Թէլէքոս (418ա) |
| 7. Անդալքիտոս (416բ) | 18. «Երբեմն ի յԱթէնս առնէին խաղս...» (418ա) — ուս. 25 |
| 8. Արխիտամիտէս (416բ) | 19. «Լեակեդոմնացի ոմն անցեալ աւուրբբ...» (418բ) |
| 9. Արխիտաս (416բ) | 20. «Լեակեդոմնացիք խրատ սիրէին կարճա... ոստ բանս...» (418բ) |
| 10. Դէոմպոմպոս (417ա) | |
| 11. Կղէոմէնէս (417ա) | |

¹⁹ Հայերենում Կիկերոն անունը չի պահպանվել. չկա նաև առաջին նախադասությունը, սակայն ամբողջ հատվածը համապատասխանում է ուսերեն Կикерон-ի անվան տակ գրված հատվածին:

21. «Այս լեակեթումնացիք, երբ զաթենացիան յաղթեցին...» (418բ) = ռուս. 23
22. «Երբեմն նուիրակը լեակեթումնացուց եկի՜ն առ ոմն Լիկտանոս բռնաւորն...» (419բ)
23. «Մի ոմն լեակեթումնացի ի պատերազմի հասանէր առ ցրուկալ թշնամիին...» (419ա) = ռուս. 24
24. «Լեակեթումնացի ոմն տեսեալ զայն, որ երթալը տանէ ի տուն...» (419ա)
25. «Զոմն լեակեթումնացին, երբ հարցանէին, թէ վասն է՞ր զկրինն էաւ ինքեան փոքրահասակ...» (419ա) – ռուս. 26:

Հայերենի 3-րդ հատորում, ռուսերենի համեմատությամբ, բացակայում է 7 անուն: Իր հերթին ռուսերենում չկա հայերենի հինգ հատված:

4-րդ հատոր

Կարևորագույն գրեալ բանք, որ եղեալ են ի սմա կնոջ ազգի իմաստուն ասացեալ բանք

- | | |
|---------------------|--|
| 1. Ալումպիա (419բ) | 7. Վաղերիա (420բ) |
| 2. Ռալիսա (419բ) | 8. Աննիա (420բ) |
| 3. Զենոպիա (419բ) | 9. Քորենիա (420բ) |
| 4. Բէռնոյ (420ա) | 10. Փյունա (421ա) |
| 5. Պիդիաս (420ա) | 11. Լեակեթումնացի ոմն գեղեցիկ կին (421ա) |
| 6. Ղուրբէկիա (420բ) | |

Վերը ասվածից պարզ երևում է, որ ռուսերենի համեմատ հայերեն թարգմանության մեջ շատ բան պակասում է, ինչպես «ուսմունքներ», ասույթների բարոյախոսական ամփոփումները և բացատրությունները, մի շարք իմաստաւերների անուններն ու համապատասխան ասույթները: Երբեմն էլ ռուսերեն թարգմանության մեջ չկան հայերենի որոշ հատվածներ: Այդուհանդերձ, Զաբարիայի մոտ կարգը գրեթե սկզբից մինչև վերջ համապատասխանում է Բենյամինի ժողովածուի ռուսերեն թարգմանությանը: Խոսելով այստեղ նկատված առանձին խախտումների մասին, պետք է հաշվի առնել, որ երկու դեպքում էլ թե՛ հայերեն և թե՛ ռուսերեն բնագրերի, գործ ունենք թարգմանական երկի հետ, ուր թարգմանիչը կարող էր որոշակի վերաբերմունք ցուցաբերել բնագրի նկատմամբ: Կրճատումները Զաբարիայի մոտ կրում են մեխանիկական բրնույթ՝ ալն, ինչ նա սակավ հետաքրքիր է համարել՝ հանել է, պահպանելով բնագրի հաջորդականությունը: Զաբարիան իր թարգմանության մեջ ղեկավարվել է որոշակի սկզբունքով՝ երկը իրոք համապատասխանեցնելով «Կարևորագույն բանքերի» պահանջին և ցուցաբերելով բարձր գրական ճաշակ: Ընտրված ասույթներն ու առակները այնքան խոստեն են և այնքան լիցքավորված բարոյախոսական դատողություններով, որ նրանց կցված խրատաբանական մեկնություններն արդեն թվում են անտեղի ու ավելորդ, մանավանդ, որ կարդալուց հետո երբեք չէին մտապահվում և բանավոր գործածվում: Մինչդեռ կարճ և դիպուկ ասացվածքներն ու առակները տպավորվում էին մարդկանց հիշողության մեջ, թափանցում կենցաղ և, համ ու հոտ տալով խոսակցական լեզվին, ապրում էին նոր կյանքով:

Այսպիսով, «Բանք իմաստասիրաց ասացեալ կարճառօտ և յօգուտ ուսմունասիրաց» երկի թարգմանությունը առնչվում է Բենյամինի ժողովածուի հետ: Հնարավոր է նաև, որ հայերեն թարգմանության տարբերություններն ու համառոտությունը՝ ռուսերեն թարգմանության համեմատ՝ զալիս են հենց լեհերեն բնագրից, որը կարող էր Բենյամինի ժողովածուի լեհական

մի համառոտ խմբագրություն լինել: Միայն այս հարցը և մի շարք այլ խնդիրներ (ինչպես օրինակ՝ թարգմանության ճշգրտության աստիճանը, ազատ թարգմանված հատվածներում հայերեն համարժեքների ստեղծման արվեստը) լուծում կարող են գտնել միայն լեհերեն բնագրերի հետ համեմատության միջոցով՝ համապատասխան նախօրինակ խմբագրությունը հայտնաբերելու հետ:

НОВЫЙ СБОРНИК «ИЗРЕЧЕНИЙ МУДРЕЦОВ» В АРМЯНСКОМ ПЕРЕВОДЕ

К. С. ТЕР-ДАВТЯН

Резюме

В армянской литературе с очень раннего времени (VI—VII вв.) известен переводный сборник «Изречений мудрецов» (*Банк и мастасирац*). Рукопись Матенадарана № 1916 (XVII в.) содержит другой сборник «Изречений мудрецов», переведенный на армянский язык общественным и литературным деятелем армянской колонии в Польше, львовским протоиереем Захарией, который в иноязычных источниках известен под именем Захарии Бернатовича. Из памятной записи переводчика явствует, что перевод осуществлен в 1633 г. Других сведений относительно перевода нет. В настоящей статье мы стремимся показать, что перевод сделан с польского языка, а основой для перевода послужил сборник «Апофегмата» польского писателя Беняша Будного, составленный в начале XVII века.